# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

## ՈՐՈՇՈՒՄ

«15» դեկտեմբերի 2021թ. № 420

### ԱՄԱՆՈՐՅԱ ՏՈՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՊՐԱՆՔՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ մասով, հաշվի առնելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի տնտեսվար Սերգեյ Դանիելյանի 2021 թվականի դեկտեմբերի 14-ի զեկուցագիրը, Ամանորյա տոներին ընդառաջ Ս.Ավետիսյան հրապարակում և Սբ. Հարություն եկեղեցու հարակից տարածքում երկու հատ տոնածառ, երկու հատ թունելային կոնստրուկցիա և չորս հատ թվային կոնստրուկցիա կառուցելու նպատակով անհրաժեշտ ապրանքներ ձեռք բերելու համար՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեի «Հանգիստ,մշակույթ և կրոն» գործառական դասակարգման «Շենքերի և շինությունների կառուցում» տնտեսագիտական դասակարգման 5112 հոդվածից հատկացնել 261 150 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 15
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«15» դեկտեմբերի 2021թ. № 421

## ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԻՍՏԵՐԻ ԴԱՀԼԻՃԻ ՀԱՄԱՐ ՍԵՂԱՆՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ մասով, հաշվի առնելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի տնտեսվար Սերգեյ Դանիելյանի 2021 թվականի դեկտեմբերի 14-ի զեկուցագիրը, Սպիտակի համայնքապետարանի նիստերի դահլիճի համար սեղանների ձեռք բերելու համար՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեի «Օրենսդիր և գործադիր մարմիններ» գործառական դասակարգման «Վարչական սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման 5122 հոդվածից հատկացնել 170 000 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 15
ք.Սպիտակ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com


# ՈՐՈՇՈՒՄ

«15» դեկտեմբերի 2021թ. № 422

## ԱՄԱՆՈՐՅԱ ՏՈՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՆԱԿ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՊՐԱՆՔՆԵՐ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ մասով, հաշվի առնելով Սպիտակ համայնքի ղեկավարի տեղակալ Արտակ Մաթոսյանի, Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Էդգար Թորոսյանի, Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի տնտեսվար Սերգեյ Դանիելյանի 2021 թվականի դեկտեմբերի 14-ի զեկուցագիրը, Ամանորյա տոներին ընդառաջ Սուրբ Հարություն եկեղեցու հարակից տարածքում Սուրբ ծննդյան տնակ կառուցելու նպատակով անհրաժեշտ ապրանքներ և աշխատանք ձեռք բերելու համար՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեի «Հանգիստ, մշակույթ և կրոն» գործառական դասակարգման «Շենքերի և շինությունների կառուցում» տնտեսագիտական դասակարգման 5112 հոդվածից հատկացնել 261 970 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 15
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«_16_» դեկտեմբերի 2021 թվականի    № _423_

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի 1.1-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի 3.2 մասով, հիմք ընդունելով թիվ 22 տարածքային ընտրական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 20-Ա որոշումը և հաշվի առնելով, որ օրենքի ուժով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ղեկավար է ընտրվել Քաջայր Վորոտի Նիկողոսյանը՝ ***որոշում եմ.***

1. 2021 թվականի դեկտեմբերի 17-ից Սպիտակ համայնքի ղեկավարի պաշտոնակատար Քաջայր Նիկողոսյանի լիազորությունները համարել դադարած:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ սույն որոշումն ընդունել ի գիտություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ________________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ.դեկտեմբերի _16_
ք. Սպիտակ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«17» դեկտեմբերի 2021 թվականի № 424

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 142.2-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի 3.2 մասով, հիմք ընդունելով թիվ 22 տարածքային ընտրական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 20-Ա որոշումը, հաշվի առնելով, որ օրենքի ուժով Սպիտակ համայնքի ղեկավար է ընտրվել Քաջայր Նիկողոսյանը՝ ***որոշում եմ.***

1. Քաջայր Նիկողոսյանի կողմից Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ղեկավարի լիազորությունները համարել ստանձնած 2021 թվականի դեկտեմբերի 17-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ.դեկտեմբերի 17
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com


# ՈՐՈՇՈՒՄ

«17» դեկտեմբերի 2021 թվականի № 425

## ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի 3.2 մասով, հիմք ընդունելով թիվ 22 տարածքային ընտրական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 20-Ա որոշումը և հաշվի առնելով, որ օրենքի ուժով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ղեկավար է ընտրվել Քաջայր Վորոտի Նիկողոսյանը՝ ***որոշում եմ.***

1. 2021 թվականի դեկտեմբերի 17-ից Սարալանջ համայնքի ղեկավարի պաշտոնակատար Էմմա Բալաբեկյանի լիազորությունները համարել դադարած:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարալանջի գյուղապետարանի առաջատար մասնագետ Վիլիկ Գևորգյանին՝ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ և վճարել:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _______________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ.դեկտեմբերի 17
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

« 17 » դեկտեմբերի 2021թ. № 426

## ԾԱՂԻԿՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հաշվի առնելով աշխատակազմի քարտուղար Ազգանուշ Ֆրանգյանի զեկուցագիրը, Սպիտակ համայնքի ավագանու բոլոր կին անդամներին ծաղիկներ նվիրելու նպատակով ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեի «Օրենսդիր և գործադիր մարմիններ» գործառական դասակարգման «Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 4237 հոդվածից հատկացնել 9 000 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 17
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

« 17 » դեկտեմբերի 2021թ. № 427

## ԱՄԱՆՈՐՅԱ ԲԱՑԻԿՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով, հաշվի առնելով աշխատակազմի քարտուղար Ազգանուշ Ֆրանգյանի զեկուցագիրը, Ամանորի և Սուրբ ծննդյան տոներին ընդառաջ շնորհավորական բացիկներ ձեռք բերելու նպատակով ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 4237 հոդվածից հատկացնել 40 000 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 17
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«20» դեկտեմբերի 2021թ. № 428

## ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՊՐԱՆՔՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ մասով, հաշվի առնելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի տնտեսվարի 2021 թվականի դեկտեմբերի 20-ի զեկուցագիրը, Սպիտակի համայնքապետարանում հյուրասիրություններ կազմակերպելու համար անհրաժեշտ ապրանքներ ձեռք բերելու համար՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեի «Օրենսդիր և գործադիր մարմիններ» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 237 080 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 20
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«20» դեկտեմբերի 2021թ. № 429

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՁՅԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԲԱՀԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ մասով, հաշվի առնելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի տնտեսվարի 2021 թվականի դեկտեմբերի 20-ի զեկուցագիրը, Սպիտակ համայնքի կարիքների համար ձյան մաքրման բահեր ձեռք բերելու համար՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեի «Օրենսդիր և գործադիր մարմիններ» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 51 500 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 20
ք.Սպիտակ